ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 676 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N 519-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 04108656) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2025 թվականի օգոստոսի 4-ի «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Բնապահպանական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N 519-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Իվի Մոթորս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00215691) 2025 թվականի օգոստոսի 22-ին կնքված՝ N ԽԱՊԱ-ԳՀԱՊՁԲ-25/04-1 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամենագնաց ավտոմեքենայի ձեռքբերում՝ 12,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նոյավան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 04100518) 2025 թվականի օգոստոսի 22-ին կնքված՝ N ԽԱՊԱ-ԳՀԱՊՁԲ-25/03 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային էներգիայի կայանի ձեռքբերում՝ 2,625,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ինտերքարս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 03569662) 2025 թվականի օգոստոսի 22-ին կնքված՝ N ԽԱՊԱ-ԳՀԱՊՁԲ-25/04-2 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամենագնաց ավտոմեքենայի ձեռքբերում՝ 12,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Էլսոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 04240513) 2025 թվականի օգոստոսի 29-ին կնքված՝ N ԽԱՊԱ-ԳՀԱՇՁԲ-25/02 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շենքերի և շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

17.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ